ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն

Գերմանական համագործակցություն
DEUTSCHE ZUSAMMENARBEIT

Implemented by
giz Deutsche Gesellschaft für Internationale Zusammenarbeit (GIZ) GmbH

Schweizerische Eidgenossenschaft
Confédération suisse
Confederazione Svizzera
Confederaziun svizra

Swiss Agency for Development and Cooperation SDC

USAID
FROM THE AMERICAN PEOPLE

ԶԵԿՈՒՅՑ

Հայաստանի Հանրապետության 2017 թ. խոշորացվող համայնքների վերաբերյալ ձեռք բերված տեղեկությունների

ԱԼԱԳՅԱԶ

համայնք

(Ալագյազ, Ավշեն, Կանիաշիր, Ճարճակիս, Միջնատուն, Միրաք, Շենկանի, Ջամշլու, Ռյա Թազա, Սադունց, Սիփան բնակավայրեր)

Հեղինակ՝ Միհր Հակոբյան

Երևան – 2017

ԱԼԱԳՅԱԶ
համայնքը՝ հպանցիկ

Վարչական տարածքը՝ 12 648 հա

Բնակչությունը՝ 4 843 մարդ

Մարզը՝ Արագածոտն

Համայնքի կենտրոնը՝ Ալագյազ

Բնակավայրերը՝ Ալագյազ, Ավշեն, Կանիաշիր, Ճարճակիս, Միջնատուն, Միրաք, Շենկանի, Ջամշլու, Ռյա Թազա, Սադունց, Սիփան

ՀՀ Ազգային ժողովի կողմից 2017 թ. հունիսի 9-ին ընդունված՝ «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի համաձայն՝ Արագածոտնի մարզի Ալագյազ խոշորացվող համայնքի կազմում ընդգրկվում է 11 գյուղական բնակավայր՝ Ալագյազ (համայնքի կենտրոն), Ավշեն, Կանիաշիր, Ճարճակիս, Միջնատուն, Միրաք, Շենկանի, Ջամշլու, Ռյա Թազա, Սադունց, Սիփան:

Համայնքի ընդհանուր նկարագիրը

Համայնքի բնակավայրերը տեղակայված են ՀՀ Արագածոտնի մարզի հյուսիսային հատվածում և մոտ են գտնվում Լոռու, Շիրակի և Կոտայքի մարզերին: Բնակավայրերի գոտիականությունը բարձրլեռնային է. ծովի մակերևույթից բարձրությունն ըստ բնակավայրերի տատանվում է 2050-2200 մետրի սահմաններում: Համայնքի ընդհանուր վարչական տարածքը խոշորացումից հետո կազմում է **12 648** հա: Տարածքով ամենամեծ բնակավայրը Ճարճակիսն է (2317 հա), ամենափոքրը՝ Շենկանին (793 հա): Համայնքի կենտրոն Ալագյազն այս չափանիշով 8-րդն է (814 հա):

Բնակչությունը

Համայնքի ընդհանուր բնակչությունը 2017 թ. դրությամբ կազմում է **4 843** մարդ: Բնակչությամբ ևս ամենամեծ բնակավայրը Ճարճակիսն է (721 մարդ), իսկ ամենափոքրը՝ Միրաքը (135 մարդ): Ալագյազը բնակչության թվով 3-րդն է (573 մարդ): Համայնքում բնակչության միջին խտությունը կազմում է 36 մարդ/կմ^2: Ամենախիտ բնակեցված բնակավայրը Կանիաշիրն է (120 մարդ/կմ^2), ամենանոսրը՝ Միրաքը (10 մարդ/կմ^2): Ալագյազում բնակչության խտությունը կազմում է 70 մարդ/կմ^2: Բնակավայրերի վարչական տարածքների ու բնակչության թվի վերաբերյալ տվյալները ներկայացված են աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1. Ալագյազ խոշորացվող համայնքում ներառված բնակավայրերի վարչական տարածքն ու բնակչությունը

№	Բնակավայրի անվանումը	Վարչական տարածքը (հա)	Հաշվառված բնակչությունը (2017 թ. դրությամբ)	Բնակչության խտություն (մարդ/կմ^2)
1	Ճարճակիս	2317	721	31
2	Ռյա Թազա	911	692	76
3	**Ալագյազ**	814	573	70
4	Ավշեն	1470	469	32
5	Կանիաշիր	387	465	120
6	Միջնատուն	1843	307	17
7	Սիփան	1176	302	26
8	Ջամշլու	901	291	32
9	Շենկանի	793	284	36
10	Սադունց	669	271	41
11	Միրաք	1367	135	10
	Ընդամենը /միջինը/	**12 648**	**4 510**	**36**

Քարտեզ 1. Ալագյազ համայնքի բնակչության տեղաբաշխումն (մարդ)՝ ըստ բնակավայրերի



Բնակավայրերի տեղաբաշխումն ու տրանսպորտային կապերը

Ալագյազը մյուս բնակավայրերի համեմատ գտնվում է կենտրոնական դիրքում: Համայնքի կենտրոնին ամենամոտ տեղակայված բնակավայրը Ջամշլուն է (2.3 կմ), ամենահեռուն՝ Միրաքը (10.3 կմ): Ալագյազից բոլոր բնակավայրերի միջին հեռավորությունը 5.94 կմ է, հասնելու համար պահանջվող միջին ժամանակը՝ 9.9 րոպե:

Ներհամայնքային տրանսպորտ չկա ոչ մի բնակավայրում, իսկ դրանցից վեցում (Ավշեն, Ճարճակիս, Միջնատուն, Միրաք, Շենկանի, Սիփան) չի գործում նաև միջհամայնքային հասարակական տրանսպորտ. բնակիչներն օգտվում են անկանոն ժամակարգով գործող մասնավոր ուղևորափոխադրումներից: Սա գերազանցապես պայմանավորված է ոչ թե տվյալ բնակավայրերի բնակչության թվով, ենթակառուցվածքների առկայությամբ կամ այլ հանգամանքներով, այլ աշխարհագրական դիրքով: Նշված վեց բնակավայրերը որոշակի հեռավորության վրա են գտնվում հանրապետական ու միջպետական ճանապարհներից, ինչի պատճառով հասարակական տրանսպորտ չի անցնում: Մինչդեռ մնացած հինգ համայնքները (Ալագյազ, Կանիաշիր, Ջամշլու, Ռյա Թազա, Սադունց) իրենց տեղադրության շնորհիվ օգտվում են Երևան-Ապարան-Սպիտակ-Ստեփանավան-Տաշիր, Ծաղկահովիտ-Վանաձոր, Երևան-Արթիկ և այլ երթուղիներից:

Համայնքի տրանսպորտային կապերի վերաբերյալ տեղեկությունները ներկայացված են աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2. Ալագյազ համայնքի տրանսպորտային կապերը

Բնակավայր	Ներքին ճանապարհների երկարությունը (կմ)	Հեռավորությունը համայնքի կենտրոնից (կմ)	Հասնելու համար պահանջվող ժամանակ (րոպե)	Հեռավորությունը մոտակա մայրուղուց
Ալագյազ	2.15	-	-	0
Ավշեն	2	5.3	13	4.3
Կանիաշիր	2.5	5.1	5	0
Ճարճակիս	4	5.3	13	4.3
Միջնատուն	3	8.3	22	7.3
Միրաք	0.7	10.3	15	2.8
Շենկանի	1	6.4	7	3.2
Ջամշլու	4	2.3	4	0
Ռյա Թազա	2	2.9	3	0
Սադունց	3	8.7	7	0
Սիփան	4	4.8	10	3.9
Միջինը	**2.58**	**5.94**	**9.9**	**2.35**

Համայնքի կենտրոն հասնելու համար պահանջվող ժամանակը հաճախ պայմանավորված է ավտոճանապարհների վիճակով: Բոլոր բնակավայրերի ներքին ճանապարհները հիմնանորոգման կարիք ունեն, իսկ Սիփան, Շենկանի, Միրաք և Ավշեն բնակավայրերի պարագայում անհրաժեշտ է նորոգել նաև համայնքի կենտրոնին կապող ավտոճանապարհները:

Ալագյազի հեռավորությունը մարզկենտրոն Աշտարակից 49.2 կմ է:

Խմելու ու ոռոգման ջրամատակարարումը և աղբահանությունը

Համայնքի 11 բնակավայրերից իննում ջրամատակարարումը կառավարվում է ՏԻՄ-ի կողմից, մեկում՝ այլ օպերատորի, իսկ մեկում՝ Միջնատանը խմելու ջուր չի մատակարարվում ենթակառուցվածքների բացակայության պատճառով. բնակիչներն այն բերում են հարևան բնակավայրերից: Ալագյազում և Սադունցում խողովակաշարերը փոխվել են վերջին 5 տարիների ընթացքում, և դրանց վիճակը բավարար է, իսկ մյուսներում փոփոխություն/վերանորոգում կատարվել է 15-25 տարի առաջ, և այժմ մասնակի կամ հիմնական վերանորոգման անհրաժեշտություն կա:

Բնակավայրերում ջրամատակարարման վերաբերյալ տեղեկությունները ներկայացված են աղյուսակ 3-ում:

Աղյուսակ 3. Ալագյազ համայնքում խմելու ջրի մատակարարումը

Բնակավայր	Ջրամատա-կարարման կառավարողը	Ջրամատա-կարարման ժամակարգը	Սակագինը (1 մ^3)	Խողովակաշարի տեխնիկական վիճակը
Ալագյազ	ՏԻՄ	շուրջօրյա	անվճար	բավարար
Ավշեն	ՏԻՄ	շուրջօրյա	անվճար	մասնակի նորոգման կարիք
Կանիաշիր	ՏԻՄ	շուրջօրյա	անվճար	բավարար
Ճարճակիս	ՏԻՄ	շուրջօրյա	անվճար	մասնակի նորոգման կարիք
Միջնատուն	-	-	-	-
Միրաք	ՏԻՄ	շուրջօրյա	անվճար	հիմնանորոգման կարիք
Շենկանի	ՏԻՄ	շուրջօրյա	300 դր.	բավարար
Ջամշլու	ՏԻՄ	շուրջօրյա	անվճար	մասնակի նորոգման կարիք
Ռյա Թազա	ՏԻՄ	շուրջօրյա	անվճար	մասնակի նորոգման կարիք
Սադունց[1]	«Վեոլիա ջուր» ՓԲԸ	շուրջօրյա	-	մասնակի նորոգման կարիք
Սիփան	ՏԻՄ	շուրջօրյա	անվճար	բավարար

Ոչ մի բնակավայրում չկա ոռոգման համակարգ, ինչը բնակիչներին հնարավորություն է տալիս աճեցնել միայն քիչ խնամք ու ոռոգում պահանջող հացահատիկներ (հիմնականում՝ ցորեն և գարի), մինչդեռ համակարգի առկայությունը թույլ կտար աճեցնել նաև բանջարաբոստանային կուլտուրաներ: Միջնատանը նախկինում եղել է ոռոգման համակարգ, որը 2016 թ. ՏԻՄ միջոցներով մասամբ վերանորոգվել է, սակայն աշխատել է 50%-ից ավելի կորստով: Իսկ 2017 թ. եղանակային պայմանների պատճառով համակարգն էապես վնասվել է, և այժմ անհնար է դրա օգտագործումը: Ճարճակիսում ոռոգումն իրականացվում է երկու ինքնաշեն խողովակների միջոցով, սակայն դրանք ևս գործում են 50%-ից ավելի կորստով: Միրաքի վարչական տարածքում կա փոքր լիճ, սակայն ենթակառուցվածքների բացակայության պատճառով չի օգտագործվում ոռոգման նպատակով:

[1] Մինչև 2017 թվականը Սադունցում ջրամատակարարումը կառավարվում էր ՏԻՄ-ի կողմից և տրամադրվում էր անվճար: 2017 թ. սկսած այն կառավարվում է այլ օպերատորի կողմից՝ վճարովի հիմունքներով, սակայն սակագինը դեռևս ֆիքսված չէ:

Աղբահանությունը բոլոր բնակավայրերում իրականացվում է անհատական եղանակով, իսկ աղբը վառվում է կամ անձնական միջոցներով տեղափոխվում որևէ չօգտագործվող տարածք: Սակայն, համայնքի կենտրոնից ստացված տեղեկության համաձայն, մինչև ընթացիկ տարվա ավարտը նախատեսվում է սկսել կենտրոնացված աղբահանությունը բնակավայրերում առկա բեռնատար մեքենաներով, իսկ աղբը տեղափոխվելու է Ալագյա-զի ավազահանք:

Կրթական հաստատությունները

Համայնքում գործում է 11 կրթական հաստատություն, որոնցից 7-ը՝ հիմնական, իսկ 4-ը՝ միջնակարգ դպրոցներ են (աղյուսակ 4): Համայնքում չեն գործում մանկապարտեզներ, երաժշտական, (գեղ)արվեստի ու մարզական դպրոցներ, վարժարաններ:

Աղյուսակ 4. Ալագյազ համայնքում առկա կրթական հաստատությունները

Բնակավայր	Հիմնական դպրոց	Միջնակարգ դպրոց	Սովորողների առավելագույն քանակ	Սովորողների առկա քանակ
Ալագյազ	-	1	73	150
Ավշեն	1	-	33	50
Կանիաշիր	1	-	32	150
Ճարճակիս	-	1	86	130
Միջնատուն	1	-	45	45
Միրաք	1	-	17	50
Շենկանի	1	-	36	45
Ջամշլու	1	-	36	50
Ռյա Թազա	-	1	102	192
Սադունց	1	-	25	100
Սիփան	-	1	28	70
Ընդամենը	**7**	**4**	**513**	**1032**

Աշակերտների թվով ամենամեծը Ռյա Թազայի միջնակարգ դպրոցն է (102 աշակերտ), ամենափոքրը՝ Միրաքի հիմնական դպրոցը (17 աշակերտ): Որոշ դպրոցներ կառուցվել են խորհրդային տարիներին, դրանից հետո ընդհանրապես չեն վերանորոգվել կամ վերանո-րոգվել են միայն մեկ անգամ 1990-ական թվականներին, և գտնվում են ոչ բարվոք վիճա-կում: Նման օրինակներ են Կանիաշիրի, Շենկանու, Ճարճակիսի, Ջամշլուի և Սադունցի դպրոցները: Իսկ Միջնատան դպրոցը գործում է վագոն-տնակում: Ավշեն, Միրաք, Ռյա Թազա և Սիփան բնակավայրերի դպրոցների վիճակը բավարար է. դրանք կառուցվել են 1988 թ. հետո: Ալագյազի միջնակարգ դպրոցը նոր է վերանորոգվել և 2017 թ. սեպտեմբե-րից հանձնվելու է շահագործման:

Առողջապահական հաստատությունները

Համայնքում չկա ամբուլատորիա, պոլիկլինիկա, հիվանդանոց և դեղատուն, և միայն չորս բնակավայրերում (Ալագյազ, Ավշեն, Ճարճակիս, Միջնատուն) գործում են բուժկետեր: Ընդ որում, միայն Ալագյազի բուժկետի վիճակը կարելի է գնահատել բավարար. մնացածը հիմնանորոգման կարիք ունեն: Կարևոր է նշել, որ բուժկետերին հիմնականում առանձին շինություններ հատկացված չեն. դրանք գործում են համայնքապետարաններում կամ դպրոցներում, երբեմն էլ՝ վագոն-տնակներում:

Մշակութային հաստատությունները

Համայնքի երկու բնակավայրերում (Ավշեն և Սադունց) գործում են մշակույթի տներ, որոնց դահլիճները կարող են տեղավորել համապատասխանաբար 200 և 100 մարդ. եր-կուսն էլ նորոգման կարիք ունեն: Ընդ որում, Ավշենի մշակույթի տունն օգտագործվում է միայն որպես հանդիսասրահ:

Համայնքի կրթական, առողջապահական ու մշակութային հաստատությունների տեղա-բաշխումը ներկայացված է քարտեզ 2-ում:

Քարտեզ 2. Ալագյազ համայնքի կրթական, առողջապահական ու մշակութային հաստատությունների տեղաբաշխումը



Համայնքի հիմնական կարիքները

Հետազոտության արդյունքում առանձնացվել են բնակավայրերի հիմնական առաջնահերթությունները, որոնք նշվել են համայնքապետարանի ներկայացուցիչների կողմից: Հիմնախնդիրների մեծամասնությունն առաջնային է մի քանի բնակավայրերի համար, իսկ մի քանիսը հատուկ են միայն տվյալ բնակավայրին: Ընդհանուր առաջնահերթություններն են.

- **ավտոճանապարհների վիճակի բարելավումը** (Ավշեն, Միջնատուն, Միրաք, Շենկանի և Ռյա Թազա),
- **խմելու ջրի ենթակառուցվածքների նորոգումը** (Միջնատուն, Միրաք, Ջամշլու, Ռյա Թազա),
- **դպրոցների շենքերի նորոգումն ու ջեռուցումը** (Միջնատուն, Շենկանի, Ջամշլու, Սադունց),
- **գազաֆիկացումը** (Ավշեն, Ջամշլու, Սիփան),
- **համայնքային կառույցների /համայնքի կենտրոն, հանդիսությունների սրահ, մարզադահլիճ/ կառուցումը** (Ալագյազ, Կանիաշիր, Շենկանի):

Ճարճակիսում առաջնային խնդիրներ են համարվում մանկապարտեզի ու գրադարանի բացակայությունը, ինչպես նաև բուժկետի անբավարար վիճակը, իսկ Սիփանում՝ շուրջօրյա ջուրկուտակիչի բացակայությունը, քանզի ձմռանը խմելու ջրի խողովակները հաճախ սառում են, ինչի պարագայում ջուրկուտակիչը կարող է արդյունավետ լուծում լինել:

Սույն զեկույցը լույս է տեսնում Գերմանիայի տնտեսական համագործակցության և զարգացման դաշնային նախարարության, Շվեյցարիայի զարգացման և համագործակցության գործակալության (ՇԶՀԳ) և ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության (ԱՄՆ ՄԶԳ) ցուցաբերած աջակցության շնորհիվ:

Հրատարակության մեջ առկա տեսակետների պատասխանատվությունը կրում են հեղինակները և չեն արտացոլում Գերմանիայի տնտեսական համագործակցության և զարգացման դաշնային նախարարության, ՇԶՀԳ և ԱՄՆ ՄԶԳ-ի և համապատասխան կառավարությունների դիրքորոշումները:

Հրապարակված է

Գերմանիայի միջազգային համագործակցության
ընկերության (ԳՄՀԸ) կողմից
Ընկերության գլխամասային գրասենյակներ՝
Բոնն և Էշբորն, Գերմանիա

ԳՄՀԸ «Լավ տեղական ինքնակառավարում Հարավային Կովկասում» ծրագիր
Բաղրամյան պող. 4/1, 0019, Երևան
Հայաստանի Հանրապետություն
Հեռ.՝ +374 (0) 10 58 05 39; 58 93 00
Ֆաքս՝ +374 (0) 10 58 92 70
Կայք՝ www.giz.de